«Հաստատում եմ»

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 28.02.2012Թ. ՆԻՍՏՈՒՄ (ԱՐՁ.№)

«28» 02 2012 Թ.

ԿԱՐԳ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ

ԻՋԵՎԱՆ

2012 Թ.

I. Ընդհանուր դրույթներ

1. Բակալավրի կրթական ծրագրով ուսումնառողների ավարտական աշխատանքների գրախոսման կարգը (այսուհետ՝ Կարգ) մշակված է ԿԳ նախարարի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի (հրաման № 1197- Ն, 31.10.2011թ.), ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ մասնաճյուղ) Կանոնադրության և «Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման կարգ» -ի (այսուհետ՝ կարգ) հիման վրա:

2. Ավարտական աշխատանքը հետազոտական բնույթի է և հաստատում է ուսանողի կողմից բակալավրի կրթական ծրագրի ելքային արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:

3. Շրջանավարտի ավարտական աշխատանքի կատարման համար նշանակվում է ղեկավար՝ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանած կարգի: Ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման:

3. Գրախոսումը կատարվում է արտադրության, գիտական հիմնարկների և մասնաճյուղի համապատասխան փորձառու մասնագետների կողմից:

4. Գրախոսողների կազմը ամբիոնի վարիչի ներկայացմամբ հաստատվում է ամբիոնի նիստում և այդ մասին տեղյակ պահվում ուսանողներին:

5. Գրախոսման կարգը հաստատում է ֆակուլտետի խորհուրդը:

II. Ավարտական աշխատանքների գրախոսության ընթացակարգը

6. Ավարտած աշխատանքը ստորագրվում է ուսանողի կողմից և հաստատված ժամկետներում ներկայացվում ղեկավարին՝ կարծիքի համար, ոչ ուշ, քան պաշտպանության համար հաստատված ժամկետից 20 օր:
7. Ավարտական աշխատանքը ստանալուց հետո ղեկավարը 7 օրվա ընթացքում տրամադրում է իր ստորագրությամբ հաստատված գրավոր կարծիքը *(հավելված 1)*:
8. Կարծիքն ստանալուց հետո ուսանողը կազմում է աշխատանքը և պատրաստի կոշտ կազմով, տիտղոսաթերթի վրա անձնական ստորագրությամբ ու ղեկավարի ստորագրության առկայությամբ, ղեկավարի կարծիքի հետ միասին տալիս է գրախոսման *(հավելված 2)*:
9. Գրախոսման համար տրվում է ոչ ավել, քան 10 օր: Գրախոսությունը ստանալուց

հետո չի թույլատրվում աշխատանքի մեջ փոփոխություններ կատարել:

10. Ավարտական աշխատանքի վերլուծության ժամանակ գրախոսը գնահատում է.

1) թեմայի ընտրության հիմնավորվածությունը, տվյալ ընտրության գիտական փաստարկումը,

2) տվյալ թեմայի համապատասխանությունը մասնագիտությանը, ըստ որի շնորհվում է որակավորում,

3) աշխատանքի մեջ հայրենական ու արտասահմանյան գիտնականների աշխատություններում տվյալ թեմայով պարունակվող տեսական եզրակացությունների օգտագործման լրիվությունը, ուսումնասիրած նորմատիվ աղբյուրների որակը, հետազոտման առարկայի օրենսդրական բազայի վերլուծությունը,

4) նպատակի ու խնդիրների համապատասխանությունը աշխատանքի բովանդակությանը, խնդիրների լուծման լրիվությունը, նյութի շարադրման տրամաբանությունը,

5) խնդրի ուսումնասիրման և սեփական առաջարկների ձևակերպման համար ուսանողի կողմից ընտրված հետազոտվող սոցիալական օբյեկտների՝ կազմակերպությունների, հաստատությունների, գործունեության օրինաչափություններն ու մեխանիզմը բացահայտող դրույթները,

6) խնդրահարույց իրավիճակի վերլուծության կոնկրետ մեթոդների կիրառման մակարդակը,

7) հեղինակի կողմից կատարված հետազոտությունների կոնկրետ արդյունքների և իրադրության գնահատման առկայությունը, առաջարկությունների ու եզրակացությունների հիմնավորվածությունը, նրանց համաձայնեցվածությունը առաջադրվող նպատակների և խնդիրների հետ,

8) եզրակացությունների հիմնավորումը և փաստարկումը, ուսանողի դատողությունների ինքնուրույնությունը,

9) աշխատանքի ձևակերպման պահանջների պահպանումը,

10) հեղինակի առաջարկած՝ իր կողմից մշակված առաջարկությունների գնահատման եղանակները, տվյալ խնդրի հետազոտման հետագա հեռանկարների որոշումը:

11. Գրախոսականը պետք է պարունակի նաև առաջարկներ՝ նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ և պաշտպանությանը թույլատելու (չթույլատրելու) հակիրճ հիմնավորմամբ:

12. Գրախոսման արդյունքն է հանդիսանում գրախոսի եզրակացությունը ավարտական աշխատանքի պաշտպանության հնարավորության մասին, և գնահատականը, որին գրախոսի կարծիքով արժանի է տվյալ աշխատանքը:

13. Ավարտական աշխատանքը, սահմանված ժամկետներում կարծիքի և գրախոսության հետ միասին, ներկայացվում է ամբիոնի վարիչին՝ պաշտպանության իրավունքի մասին որոշման համար: Պաշտպանության իրավունքի մասին որոշումը կարող է լինել դրական, նույնիսկ այն դեպքում, եթե գրախոսությունը բացասական է:

14. Պաշտպանության իրավունքի մասին որոշումը ձևակերպվում է տիտղոսաթերթի վրա և ամրագրվում է ամբիոնի վարիչի ստորագրությամբ:

15. Պաշտպանության իրավունքի մերժման դեպքերում հարցը քննարկվում է ամբիոնի նիստում, որը կայացնում է հիմնավորված որոշում: Պաշտպանության իրավունքի մերժման պատճառներից կարող է հանդիսանալ ավարտական աշխատանքի անհամապատասխանությունը ստացող մասնագիտությանը, տվյալ ուղեցույցում շարադրված պահանջներին, աշխատանքի նախապատրաստման ժամկետների չպահպանելը:

16. Ամբիոնի վարիչի որոշման, գրախոսության և կարծիքի հետ ավարտական աշխատանքները փոխանցվում են ամբիոն՝ ոչ ուշ, քան պաշտպանությունից 2 – 3 օր առաջ:

III. Ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները

17. ***«Գերազանց» գնահատական*** դրվում է այն դեպքում, եթե

1) աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է ընտրած մասնագիտությանը և աշխատանքի թեմային;
2) աշխատանքը այժմեական է, կատարված է ինքնուրույն, ունի ստեղծագործական բնույթ, աչքի է ընկնում որոշակի նորամուծությամբ;
3) կատարված է խնդրի տեսական հետազոտման աստիճանի, նրա լուծման տարբեր մոտեցումների հանգամանալից վերլուծություն;
4) ցուցաբերված է նորմատիվ բազայի իմացություն, հաշվի են առնված տվյալ խնդրի վերաբերյալ վերջին փոփոխությունները օրենսդրության մեջ և նորմատիվ փաստաթղթերում;
5) խնդիրը վեր է հանված խորությամբ և բազմակողմանի, նյութը շարադրված է տրամաբանորեն;

6) տեսական դրույթները սահուն զուգակցվում են կառավարչական փորձի հետ; տրված են հետաքրքրություն ներկայացնող գործնական հանձնարարականներ, որ բխում են խնդրի վերլուծությունից;

7) աշխատանքում լայնորեն կիրառվում են հեղինակի կողմից խմբի կազմում կամ էլ ինքնուրույն անցկացրած հետազոտության նյութերը (առանձին դեպքերում թույլատրվում է հենվել ունեցած տվյալների երկրորդական վերլուծության վրա);

8) աշխատանքում կատարված է խնդրի քանակական վերլուծություն, որը հաստատում է տեսությունը և լուսաբանում է իրական վիճակը, բերված են համեմատության աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, բանաձևեր, որ ցույց են տալիս հեղինակի՝ հետազոտության արդյունքները ձևավորելու կարողությունը;

9) լայնորեն ներկայացված է աշխատանքի թեմայով գրականությունը;

10) աշխատանքի հավելվածները լուսաբանում են հեղինակի ձեռքբերումները և հաստատում են նրա եզրակացությունները;

11) իր բովանդակությամբ և ձևով աշխատանքը համապատասխանում է բոլոր ներկայացված պահանջներին:

18. *«Լավ» գնահատական* դրվում է, եթե.

1) թեման համապատասխանում է մասնագիտությունը;

2) աշխատանքի բովանդակությունը ամբողջությամբ համապատասխանում է ավարտական առաջադրանքին;

3) աշխատանքը այժմեական է, գրված է ինքնուրույն;

4) արված է խնդրի տեսական հետազոտության աստիճանի վերլուծություն;

5) աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են տեսական և մեթոդաբանական բավարար մակարդակով;

6) տեսական դրույթները զուգակցվում են կառավարչական փորձի հետ;

7) ներկայացված են խնդրահարույց իրավիճակը բնութագրող քանակական ցուցանիշներ;

8) գործնական հանձնարարականները հիմնավորված են;

9) հավելվածները կազմված են գրագետ, երևում է կապը ավարտական աշխատանքի դրույթների հետ;

10) Աշխատանքի թեմայով կազմված է գրականության ցանկ:

19. *«Բավարար» գնահատական* դրվում է, եթե.

1) աշխատանքը համապատասխանում է մասնագիտությանը;

2) առկա է հայտարարված թեմային աշխատանքի բովանդակության որոշակի անհամապատասխանություն;

3) հետազոտվող խնդիրը հիմնականում բացահայտված է, սակայն աչքի չի ընկնում նորամուծությամբ, տեսական խորությամբ և փաստարկումներով;

4) խախտված է նյութի շարադրման տրամաբանությունը, խնդիրները բացահայտված չեն ամբողջությամբ;

5) աշխատանքում ամբողջությամբ չեն օգտագործված թեմայի բացահայտման համար անհրաժեշտ գիտական գրականությունը, նորմատիվ փաստաթղթերը, ինչպես նաև հետազոտությունների նյութերը;

6) տեսական դրույթները թույլ են կապակցված են կառավարչական փորձի հետ, գործնական հանձնարարականները կրում են ձևական, ոչ ապացուցված բնույթ;

7) հավելվածների բովանդակությունը չի լուսաբանում դրված խնդիրների լուծումները:

20. ***«Անբավարար» գնահատական*** դրվում է, եթե.

1) աշխատանքի թեման չի համապատասխանում մասնագիտությունը;

2) աշխատանքի բովանդակությունը չի համապատասխանում թեմային;

3) աշխատանքը պարունակում է էական տեսական – մեթոդաբանական սխալներ և հիմնական դրույթների մակերեսային պարզաբանում:

ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի *(ՀՈՒԲ)*

«_____» մասնագիտության, _____ կուրսի

ուսանող _____-ի
(ազգանուն, անուն, հայրանուն)

«_____» թեմայով

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարի կարծիքը կազմվում է ազատ ձևով, ներքոհիշյալ հիմնական հարցերի պարտադիր լուսաբանմամբ.

1. Աշխատանքի այժմեականությունը:
2. Աշխատանքի բովանդակության համապատասխանությունը ավարտական աշխատանքի թեմային:
3. Աշխատանքի կառուցվածքի բնութագիրը;
4. Լրիվությունը, դրված խնդիրների լուծման հիմնավորվածությունը:
5. Աշխատանքի կատարման ինքնուրույնության աստիճանը:
6. Հետազոտություններ անցկացնելու, վերլուծելու և եզրակացություններ կատարելու կարողությունը:
7. Հեղինակի նախագծային առաջարկությունների կարևորության աստիճանը:
8. Շարադրման գրագիտությունը, ձևավորման որակը:
9. ՈՒսանողի աշխատանքը հատկապես առանձնացնող դրույթները:
10. Այլ հարցեր (ղեկավարի հայեցողությամբ):
11. Աշխատանքի՝ պաշտպանությանը պատրաստ լինելու եզրակացությունը (առանց գնահատականի):

ՂԵԿԱՎԱՐ՝ _____
(պաշտոն, գիտ.աստիճան, գիտ. կոչում) (ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

հավելված 1

ԿԱՐԾԻՔ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի *(ՀՈՒԲ)*

«_____» մասնագիտության, _____ կուրսի

ուսանող _____-ի

(ազգանուն, անուն, հայրանուն)

«_____» թեմայով

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՂԵԿԱՎԱՐ՝ _____

(պաշտոն, գիտ.աստիճան, գիտ. կոչում) (ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի *(ՀՈՒԲ)*

«_____» մասնագիտության, _____ կուրսի

ուսանող _____-ի
(ազգանուն, անուն, հայրանուն)

«_____» թեմայով

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրախոսությունը կազմվում է ազատ ձևով՝ հետևյալ հարցերի լուսաբանմամբ:

1. Աշխատանքի բովանդակության համապատասխանությունը նրա վերնագրին և մասնագիտությանը:
2. Խնդրի այժմեականությունը:
3. Շարադրման տրամաբանությունը, նյութի նորամուծությունը, աշխատանքի կառուցվածքը:
4. Ավարտական աշխատանքի տեսական – մեթոդաբանական բազայի հիմքում դրված քննության առնված գիտական աղբյուրների առկայությունն ու որակը:
5. Աշխատանքում խնդիրների, նպատակների բացահայտման լրիվությունը, հետազոտության արդյունքներով նրանց հաստատումը:
6. Աշխատանքում դրույթների առկայությունը, որ բացահայտում են ուսումնասիրվող սոցիալական օբյեկտների գործունեության մեխանիզմն ու օրինաչափությունները:
7. Հեղինակի առաջարկությունների հիմնավորվածության աստիճանը:
8. Ավարտական աշխատանքի կամ էլ նրա մասերի գործնական կիրառման հնարավորություններն ու տեղը:
9. Աշխատանքի ձևավորումը:
10. Աշխատանքի թերությունները:
11. Ավարտական աշխատանքի գնահատականը:
12. Այլ հարցեր (գրախոսի հայեցողությամբ):

ԳՐԱԽՈՍ՝ _____
(պաշտոն, գիտ.աստիճան, գիտ. կոչում) (ստորագրություն)

«_____» _____ 20 թ.

հավելված 2

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի _____ ֆակուլտետի *(ՀՈՒԲ)*

«_____» մասնագիտության, _____ կուրսի

ուսանող _____-ի
(ազգանուն, անուն, հայրանուն)

«_____» թեմայով

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԳՐԱԽՈՍ՝
(պաշտոն, գիտ.աստիճան, գիտ. կոչում)

_____
(ստորագրություն)

«_____» _____ 20 թ.